ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» փետրվարի 2016 թ. N 33 - Ա

«ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ա. Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված ՀՀ ԳՆ-ՇՀԱՊՁԲ-15/19-1-ԲԲՊՎ-58 պայմանագրի շրջանակներում ձեռք բերված 5900 կիլոգրամ «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցն (այսուհետ՝ պաշտպանության միջոց) եռօրյա ժամկետում հանձնել «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝ ապահովել հանձնված պաշտպանության միջոցի պահպանությունը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ